№ 24. ՅՈՒԼԻՍԻ 1 (13) 1876 ՅՈՒԼԻՍԻ 1 (13) № 24.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ.»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

МОСКВА 8 ՅՈՒԼ 1876 ՏՊՐՈ

ՄՇԱԿ

Լրագրի ԿԷՍ ՏԱՐՎԱՑ բաժանորդութեան գինը, յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31 1876 թ.ի՝ 3 ՐՈՒԲԼ է։ Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրատան մէջ, պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ խանութում։

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք դեռ չեն վճարել „ՄՇԱԿԻ“ ներկայ տարվայ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, շուտով հասցնել նրան խմբագրութեանը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція армянск. газеты «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրիստոնէութիւն և մահմետականութիւն։—Ներքին տեսութիւն։ Մեր ուսումնարանների հարցը։ Նամակ Ախալքալաքից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Աւստրո-Ունգարիա։ Թիւրքիա։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Արևելեան խնդիրը և հայերը Թիւրքիայում։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Ամբողջ տարի է արդէն որ թէ եւրոպական հասարակական կարծիքը, թէ ընդհանուր քաղաքականութիւնը զբաղված են արևելեան հարցով։ Թիւրքիահպատակ քրիստոնեաների պատերազմը մահմետականների ճնշող ոյժի դէմ՝ քննադատութեան առարկայ է դարձել ամբողջ աշխարհի լրագրութեան և գրականութեան համար, հոգսերի և պարապմունքների առարկայ է դարձել կրթված աշխարհի դիպլոմատիայի համար.... Քրիստոնեայ ազգերի անունները, որք ապստամբված են Թիւրքաց անտանելի լուծի դէմ, յիշվում են իւրաքանչիւր լրագրում։ Թիւրքիահպատակ քրիստոնեայ ազգերի անունները, որք այդքան դար ճնշված են Ռուսում մահմետականութեան անողորմ և քաղաքակրթութեան թշնամի տարրի տիրապետութեան տակ, լսվում են ամեն բերաններից,—միայն մի ազգի անունը ոչ մի տեղ չենք պատահում՝ ոչ լրագիրներում, ոչ դիպլոմատական թղթերում, ոչ էլ հասարակական առօրեայ խօսակցութեան մէջ։

Իսկ այդ ազգը, հայերը, փոքր ազգ չեն։ Մօտ երեք միլիոն քրիստոնեայ ժողովուրդ, Թիւրքաց տէրութեանը հպատակ, նոյնքան և գուցէ աւելի թշուառ դրութեան մէջ է գտնվում, քան թէ սլավոնական ազգերը։

Այդ ազգը դարևոր բարոյական, մտաւոր և տնտեսական ճնշման պատճառով դարձել է բոլորովին կրաւորական, նա չունի այնքան բարոյական զօրութիւն, որ իր ճնշման դէմ բողոք բարձրացնէ անդամ.... Նա կորցրել է հաւատ դէպի իր սեփական ոյժերը, նա հաշտվել է այն մտքի հետ, որ ինքն ոչ թէ միայն ազգ չէ, այլ որ իր անհատներից իւրաքանչիւրը իրաւունք չունի մինչև անդամ մարդի անունը կրելու, իրաւունք չունի այն հասարակ ընդհանուր մարդկային իրաւունքները վայելելու, որ վայելում է ամեն մի մարդկային էակ....

Թիւրքիայի հայերը ճնշված, ստորացրած են, մինչև այն աստիճան կրաւորական են դարձրած, որ իրանց սեփական շրջանից անկարելի է սպասել բռնաւորութեան, հալածանքի, ճնշման դէմ բողոք.... Հայը հասել է դարևոր ստրկութեան շնորհով անկման այն աստիճանին, որ կորցրել է հաւատ դէպի իր սեփական ոյժերը, ինքն իրան արհամարհում է ոչ թէ միայն որպէս մի ամբողջ ազգութիւն, բայց մինչև անդամ որպէս մարդ.... Հայը՝ որպէս մարդ էլ չէ յանդգնում մտածել անդամ որ իւրաքանչիւր մարդկային էակին հաւասար իրաւունք ունի պահանջել ընդհանուր մարդկային իրաւունքները, կեանքի ապահովութեան և ազատութեան անբռնաբարելի իրաւունքները....

Պէտք է մի դրսի հզօր ոյժ, դրսի ազդեցութիւն յայտնվի, որ մարդասիրական դուրթից շարժված, մեկնէր այդ հոգով ընկած, անդադար բռնաւորութեան տակ յուսահատված և մաշված ազգութեանը իր օգնութեան ձեռքը....

Հայերը աշխարհիս երեսին քրիստոնեայ ամենահին ազգութիւն են։ Հայերի մէջ Քրիստոսի վարդապետութեան լոյսը սկսել է մուտք գործել դեռ աստուածային վարդապետի կենդանութեան ժամանակ,—և այն ժամանակից մինչև այժմ Ասիայի մէջ Քրիստոնէութեան այդ կարապետները՝ տասն և վեց դար շարունակ կրում են Քրիստոնէութեան, յաւիտենական ճշմարտութեան անունով ամենասարսափելի մարտիրոսական տանջանքները՝ առաջ զրադաշտական, յետոյ մահմետական լուծից...

Քաղաքակրթված աշխարհի համար այդ քրիստոնէական բարոյապէս պատերազմող տարրը, քրիստոնէութեան այդ կարապետները Ասիայում՝ պէտք է թանգագին լինէին որպէս աւետարանի առաքեալները բարբարոսական աշխարհում....

Միթէ Եւրոպան Թիւրքիահպատակ քրիստոնեայ խօսքով հասանում է միայն պալաոնացիներին և ուղղափառներին, միթէ մի և նոյն չէ ընդհանուր մարդկային օգուտների համար որ յեղին և քրիստոնէական եկեղեցու որ դաւանութեան է պատկանում ճնշված քրիստոնէական այս կամ այն ազգութիւն, մանաւանդ այնպիսի ազգութիւն, որի կոչումն էր միշտ և պէտք է լինի՝ միջնորդ լինել Ասիայում քրիստոնէութեան, ուրեմն և քաղաքակրթութեան լոյսի տարածման....

Եթէ այդ կոչումը առաջ անգիտակցական էր,—նա ապագայում պէտք է գիտակցական դառնայ։

Մանաւանդ մի եւրոպական պետութեան, այն է Ռուսաստանի ձեռքում, որի կոչումն է տարածել Արևելքում համշխարհային քաղաքակրթութիւնը՝ այդ. տոկուն, աշխատասէր, քրիստոնէութեան դաղափարի իրան զոհված ազգութիւնը, հայերը՝ կարող էին որպէս միջոց ծառայել Փոքր-Ասիայում քրիստոնէութեան ազդեցութիւն յայտնվի, որ մարդասիրական դուրթից շարժված, մեկնէր այդ հոգով ընկած, անդադար բռնաւորութեան տակ յուսահատված և մաշված ազգութեանը իր օգնութեան ձեռքը....

Քաղաքակրթված աշխարհի համար այդ քրիստոնէական բարոյապէս պատերազմող տարրը, քրիստոնէութեան այդ կարապետները Ասիայում՝ պէտք է թանգագին լինէին որպէս աւետարանի առաքեալները բարբարոսական աշխարհում....

Միթէ Եւրոպան Թիւրքիահպատակ քրիստոնեայ խօսքով հասանում է միայն պալաոնացիներին և ուղղափառներին, միթէ մի և նոյն չէ ընդհանուր մարդկային օգուտների համար որ յեղին և քրիստոնէական եկեղեցու որ դաւանութեան է պատկանում ճնշված քրիստոնէական այս կամ այն ազգութիւն, մանաւանդ այնպիսի ազգութիւն, որի կոչումն էր միշտ և պէտք է լինի՝ միջնորդ լինել Ասիայում քրիստոնէութեան, ուրեմն և քաղաքակրթութեան լոյսի տարածման....

Եթէ այդ կոչումը առաջ անգիտակցական էր,—նա ապագայում պէտք է գիտակցական դառնայ։

Մանաւանդ մի եւրոպական պետութեան, այն է Ռուսաստանի ձեռքում, որի կոչումն է տարածել Արևելքում համշխարհային քաղաքակրթութիւնը՝ այդ. տոկուն, աշխատասէր, քրիստոնէութեան դաղափարի իրան զոհված ազգութիւնը, հայերը՝ կարող էին որպէս միջոց ծառայել Փոքր-Ասիայում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Արդէն մէկ տարի է որ Բալկանեան թերակղզիում քրիստոնեայ ազգերը զէնքը ձեռներին՝ մարտնչում են իւրեանց ազատութեան համար։ Ամեն տեսակ չարաչար նեղութիւնների ընդդիմանալով՝ լաւ են համարում պատերազմի դաշտում մեռնել, քան թէ կրկին Օսմանեան տէրութեան ծանր լուծի տակ մտնել, որտեղ մարդը զուրկ է ամենահասարակ մարդկային իրաւունքներից՝ նա կրում է մարդ անունը իբրև ծաղր միայն։

Եւրոպայի դիպլոմատիան աշխատում է այդ արիւնհեղութեան վերջ տալ, պատերազմի բոցը, այսպէս կոչուած արևելեան խնդիրը կարողութեան չափ սահմանափակել, բայց դա հանդիպում է մեծամեծ արգելքների։ Մէկ կողմից դիպլոմատիան չէ կարող պետական իրաւունքների հիմանց հակառակ Օսմանեան պետութեան ներքին գործերի մէջ խառնուել, միւս կողմից այդ չանելով՝ կարող չէ նա տառապեալ, թշուառ քրիստոնեայ ազգերի վիճակը բարւոքել, նոցա արդարացի պահանջները կատարել տալ։—Իսկ չէզոք նստել և նայել այդ արիւնհեղութեան վերա, այդ ոչ թէ ընդդէմ է այժմեան դարու մարդասէր հոգւոյն, այլ և երկիւղ կայ որ այդ տեսակ պատերազմ չարունակուելով, կարող է ցեղականի և կրօնականի փոխուել և ընդհանուր խաղաղութիւնը ոչնչանալ, որի համար անչափ աշխատում են Եւրոպայի կաբինէտները։

Թիւրքիայում status-quo պահպանել և այսպէս արդելք դնել արևելեան խնդրի բռնի լուծմանը, քրիստոնեաների վիճակը, զրութիւնը այժմեան դարուս պահանջներին յարմարացնել տալ և Եւրոպայի ընդհանուր խաղաղութիւնը ամրացնել,—ահա էական մտքերը, որոնք ստիպել են երեք հիւսիսային մեծ պետութիւնների առաջին ներկայացուցիչներին Բերլինում խորհրդակցելու։ Թէպէտ և Անգլիան չէ համաձայնվում յիշեալ խորհրդի վճիռների հետ, իւր մասնաւոր հայեացքը պահպանելով արևելեան խնդրի վերաբերմամբ, բայց յոյս կայ, որ ընդհանուր խաղաղութիւնը չը խանգարուի։ Որովհետև ամենքը ցանկանում են այդ անճոռնի արիւնհեղութեան դադարելը, ամենքը ընդունում են, աւելի թէ պակաս, քրիստոնեաների պահանջների արդարացի լինելը և ամենքը պահանջում են, որ վերջապէս Օսմանեան պետութենից վաղուց չատ անդամ խոստացած, բայց չը կատարած իրաւունքների տալը քրիստոնեաներին, իրագործուի։ Այս ամենից հաւաստիութիւնը գտնվում է Կայսեր Ալէքսանդրի անձնաւորութեան մէջ. Կայսրը եղել է միշտ խաղաղութեան միջնորդ և համակրութեամբ նայել է թշուառ քրիստոնեաների վերա Թիւրքիայում։

Լրագիրների ընթերցողին յայտնի է Օսմանեան պետութեան այժմեան դրութիւնը։ Ֆինանսական մնանկութեանը յաջորդում է և բնականապէս քաղաքական մնանկութիւնը։ Կառավարութիւնը մինչև օրս իւր գլուխը կորցրած՝ կարողացել չէ խռոված դաւառները խաղաղացնել և պատերազմին իւր սեփական ուժովը վերջ տալ։ Մինչև անդամ օրը կէսօրին իւր առջևը ամբոխը սպանում՝ է օտար տէրութիւնների ներկայացուցիչներին, և այս ամենանց քերի առջև կառավարութիւնը կատարեալ իրեն անկարող է ցոյց տալիս։ Օտարները, քրիստոնեաները Թիւրքիայում ստիպուած են իւրեանց ապահովութեան համար իրենք հոգս տանել։ Այս բոլոր չփոթութիւնը, անարխիան հասնում է իւր բարձր կէտին—Սուլթան Աբդուլ-Ազիզին բռնի գահից հեռացնում են և նորա տեղը (ժողովրդեան կամքով) Մուրադ-էֆէնդին նստում է Օսմանեան գահի վերա, առաջին անդամ իբրև կայսր Թիւրքիայի։

Իզուր են Թիւրքիայի առաջնորդող անձինքը հեռու երկիրներում իրենց թշնամիները տեսնում, իզուր են իրենց համար հեռու երկիրներում բարեկամներ պտռում։ Օսմանեան պետութեան ամենամեծ և բուն թշնամին ինքը կառավարութիւնն է, և իրեն համար ճշմարիտ բարեկամներ պէտք է և կարող է իւր մէջը միայն որոնել։ Ցանկանում է Օսմանեան կառավարութիւնը, որ իւր մէջ խաղաղութիւն վայելէ և օտար տէրութիւնների մօտ պատուած լինի, նորա պետական կեանքի ընթացքը դրսից ընդմիջող չը լինի,—նա պէտք է իւր զոյութեան պայմանները իւր սեփական ոյժերի վերա հիմնէ։ Դորա համար հարկաւոր է անցեալին մնաբարև ասել և կառավարութեան ձևը հիմնաւորապէս փոխել և բարոյական, քաղաքական-տնտեսական նոր ու առողջ հիմանց վերա կանգնեցնել Մուրադ կայսեր պետութիւնը։ Բայց Ղօրանով ոչինչ կարելի չէ սկսել և առաջ տանել։ Մենք գիտենք որ այս վերջին յեղափոխութիւնների մէջ մի նոր տարր նշանաւոր դեր է խաղացել—սոֆթաները։—Սոքա Ղօրանի աշակերտներ են, [illegible] խօսքով Թիւրքիայի կղերական դասը։ Որ երկ[illegible] հարցնում ենք մենք, տէրութիւնը առաջ է գնացել երբ կղերականութիւնը կառավարութիւնը ձեռքն է զցել։ Պինդ հիմնած տէրութիւններ անկման հասել են կղերականների շնորհով։ Օսմանեան պետութիւնը, որը եւրոպական հասկացողութեամբ պետական չատ հարկաւոր պահանջներից զուրկ է, որի հիմքը խախուտ է, որի զոյութեան պայմանները իւր մէջ չէ, այլ իրանից դուրս,—միթէ այս պետութեան վերանորոգողները, առաջնորդողները, պիտի լինեն սոֆթաները, Ղօրանի տիրացուները....

Մէկ պետութեան մէջ, որը զանազան ազգերից է կազմուած, որոնք թէ հաւատով և թէ սովորութիւններով զանազանվում են միմեանցից, տարակոյս չը կայ կրօնական խնդիրը յարուցանելով՝ պետութիւնը կարող է միայն վնասուել։ Ուրեմն Օսմանեան պետութեան առաջնորդող անձինքը եթէ ճշմարիտ հայրենասէր են և Օսմանեան պետութեան զոյութիւնը ցանկանում են, կաշխատեն պետութեան այնպիսի մի ձև տալ, որով ամեն ազգերը կարողանային խաղաղ միմեանց հետ և մօտ ապրել և զարգանալ։ Մենք չենք կարծում, որ ստիպուած լինելով քրիստոնեայ այս կամ այն ազգութեան զանազան արտօնութիւններ, ազատութիւններ տալու՝ որ ի հարկէ միշտ միւս մի ուրիշ հպատակ ազգի հաշվին կը լինի, ապագայ խաղաղութիւնը ապահովուած լինի։ Այդպիսի խորութիւններով կարելի է միայն քրիստոնեաների և մահմետականների մէջ թշնամութիւնը բորբոքել։ ընդհակառակն ազգերի մէջ, որոնք միմեանց մօտ, այո միմեանց մէջ ապրում են, ոչինչ զանազանութիւն չը պէտք է լինի, այլ հաստատ և արդար զործադրած օրէնքներով պէտք է հաւասար լինեն, որ խաղաղ կարողանան թէ իւրեանց մասնաւոր և թէ պետութեան գործին ծառայել։ Միայն այս ճանապարհով կարելի է Օսմանեան պետութեան զոյութիւնը ապագայում ապահովացնել։—

Որովհետև այս ամենը սոֆթաների ձեռքով չէ լինելու և կարող չէ իրագործուել, և որովհետև մենք ցանկանում ենք, որ Օսմանեան պետութեան նոր կառավարութիւնը նորոգուած այս նեղ դրութենից դուրս դայ, այդ պատճառով յոյս ունենք, որ ինչպէս սոֆթաները արհեստական ճանապարհով հեշտ հանդէս են դուրս եկել, նոյնպէս հեշտ իրանց արժանի խաւարի կը դառնան։ Բայց մենք թողնենք այդ ամենը, մանաւանդ որ հիմայ արևելեան խնդիրը այս վերջին պատահմունքներից յետոյ, այնպիսի մի շրջան է մտել, որի մասին ոչինչ առ այժմս հաստատ կարելի չէ ասել, թէ ինչպէս կը վերջանայ, թէպէտ և մենք դորա խաղաղ վերջանալուն աւելի վստահ ենք,—մենք դառնանք մեր հայերին։

Ոչ մէկ քրիստոնեայ ազգ չը կայ արևելքում, որը այնչափ հալածանքի, նեղութիւնների ենթարկուած լինի, ինչպիսի է մեր թշուառ հայոց ազգը։ Դարևոր ժամանակներից ստրկութեան մէջ ընկած՝ հայերը դառել են ամեն իրաւունքներից զրկուած կենդանիներ մահմետականների համար, որոնց հետ կարելի է վարուել, ինչպէս որ կամին։ Հայերը կրում են ամենախայտառակ նախատինքը, դառն ստրկութեան լուծը, մի այնպիսի ստոիկեան սառնութեամբ, որը մի աւելի լաւ գործքի արժանի է։ Միթէ հարկաւոր է օրինակներ բերել։ Նոյնպէս ոչ մի ազգ չը կայ արևելքում, որը աւելի արժանի լինէր համակրութեան, որը պատմական աւելի իրաւունք ունենար քրիստոնեայ մեծ ազգերի օգնութեան վերա, ինչպէս հայոց անտէր և անօգնական ազգը Թիւրքիայում։—

Եւրոպա ամեն տեղ, ամեն լրագիրներում գրում են, վիճում են արևելեան քրիստոնեաների մասին, բայց դժբաղտաբար մինչև օրս հայոց մասին ոչինչ չը կարդացինք, ոչինչ չը լսեցինք։ Այո, աւելի ցաւալին այն է, որ եւրոպայի կաբինէտներում, պօլիտիկական ընկերութիւնների մէջ, լրագիրներում արևելեան քրիստոնեայ ազգերի թշուառ վիճակը ասելով՝ ամենևին չեն հաշվում, չեն մտաբերում անդամ և հայերին։

Թիւրքիայի ամեն քրիստոնեայ ազգերը ունեն ուրիշ երկիրներում իրանց համար ազգականներ,

ԴԱՎՈՒՄՈՅՏ ԴԱՎԺՅԴ

Ս. Ե.

Հ. Դ. Վ. Ի. Ս. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն

թեցիները յոյս ունեն որ գոնէ սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսը այդ անկարգութեան վրա ուշադրութիւն կը դարձնէ։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ այս տարի Մարդասիրական Ընկերութեան ընդհանուր ժողովում ընտրված խորհրդի անդամ, Գրիգոր Դիլսարեանց, հրաժարվեցաւ այդ պաշտօնից։ Ընկերութիւնը ընդունեց նրա հրաժարականը և նրա տեղ ընդունեց հերթական կանդիդատներից հետևեալին։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ՝ «Մշակի» անցեալ թերթերից մինի մէջ կարդացինք որ խորէն վարդապետ Ստէփանէ մասնվեցաւ մի քանի անձինքների ձեռքով թէ կառավարութեան, թէ հայոց հոգևոր իշխանութեան առաջ, որ իբր թէ նա քարոզում է և դաստիարակում է երեխաներին հակառակ պետական և կրօնական ուղղութեան։ Այժմ լսում ենք որ հայր խորէնը խնդրած լինելով Վեհափառից որ այդ գործի մասին քննութիւն նշանակվի, Ս. Էջմիածնից ուղարկվեցան Շուշի Ստէփանոս վարդապետ Մխիթարեան և պ. Թադեոսեան որպէս քննիչներ։ Լսում ենք որ ահա մի ամիս ու կէս է որ գործը քննվում է և հայր Ստէփանէն բոլորովին արդարանում է այդ գործում։ Ցոյս ունենք որ երբ որ կը վերջանայ գործը, հայոց ընթերցող հասարակութեանը կը յայտնվի տպագրութեան միջոցով ամբողջ գործի հանգամանքների մանրամասնութիւնները։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են հետևեալը՝ սորանից մօտ երկու ամիս առաջ տեղական զօրքի գանձարանից (արկղից), անյայտ գողեր գողացել են մօտ 9000 բուբլ։ Այդ մասին խիստ քննութիւն նշանակվեցաւ և այժմ լսում ենք, թէ գողը գտնվեցաւ։ Դա, ասում են, մի հասարակ սոլդատ է եղել։

—

Մեզ գրում են ԿԱԽ գիւղից՝ «Յունիսի 20-ին երեկոյեան 8 3/4 ժամին սկվեց սարսափելի անձրևահառն կարկուտ և տևեց մինչև 20 բոպէ, այնպէս որ այդ կարճ միջոցում մի սաստիկ հեղեղ գոյացաւ գիւղիս մէջ, որ բաւական վնաս տուեց բոյսերին։

—

ԹԻՖԼԻՍԻ փոստային վարչութեան կառավարիչ նշանակվեցաւ այժմ պ. Բէղիրգանով, որ մի քանի ժամանակ Ստավրոպոլի փոստի կառավարիչ էր և սորանից առաջ Թիֆլիսի փոստային վարչութեան մէջ ծառայած ժամանակ գրաւած ունէր թէ իր ստորադրեալների, թէ հասարակութեան համակրութիւնը։

—

ՕՆՔԱԹԱԼԻ հոգեհոգ վնասվածների համար բաց արինք ստորագրութիւնը և մինչև այժմ միայն այսքան ունենք՝ 1) «Մշակի» խմբագրութիւն 5 բուբլ։—2) Բժշկապետ Գ. Քուչարեանց (Թիֆլիսում) 2 բուբլ։—3) Մ. Էլիազով (Թիֆլիսում) 1 բուբլ։

—

ԵՐԵՒԱՆԻ հեղեղից վնասվածների համար սկսել ենք հաւաքել նուիրատուութիւններ՝ 1) «Մշակի» խմբագրութիւն 5 բուբլ։—2) Բժշկապետ Գ. Քուչարեանց (Թիֆլիսում) 2 բուբլ։

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱ գիւղից մեզ չնորհակալութիւն են յայտնում «Մշակի» մէջ տպված «Վերադառնանք» և «Թիւրքիայի հայոց մասուլը» վերնագրով յօդվածների համար։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ ուղղված մի մանաւոր նամակից քաղում ենք հետևեալը՝ «Իր հինգ տարվայ ընթացքում «Մշակը» զարթեցրել է շատ հարցեր, ինչի մինչև այսօր մի խօսք էլ չէ կամենում ասել և յարուցանել այն միտքը որ Թիֆլիսում էլ կազմվի և հաստատվի Բագուի Մարդասիրական Ընկերութեան պէս մի ընկերութիւն։ Այդ տեսակ հարցեր զարթեցնելն էլ մամուլի պարտականութիւնն է և կարծում եմ որ Թիֆլիսում այդ տեսակ ընկերութիւն կարող էր աւելի էլ աջողվել քան թէ Բագուի մէջ, կամ մի այլ քաղաքում։»

—

Կիրակի օր, յուլիսի 4-ին, առաւօտեան ժամը 9-ին լինելու է ԹԻՖԼԻՍԻ դումայի դահլիճում Թիֆլիսեան արուեստաւորների ընկերութեան ընդհանուր ժողովը։

—

Մեզ գրում են ՇԱՄԱԽՈՒՑ յունիսի 23-ից, որ քանի մի օր առաջ Զագիրլի գիւղում պատահած սաստիկ հեղեղից մի կին և երկու մարդ խեղդվել են։

—

Յուլիսի 6-ին, երեքշաբթի օրը ԹԻՖԼԻՍԻ Թատրոնում հայ-թատրոնական խումբը կը ներկայացնէ յօգուտ օրիորդ Սանդուխտի՝ Մօլիէրից թարգմանված «Ակամայ բժիշկ» պիէսան։ Թատրոնական այգիում կոնցէրտ կը լինի ներկայացումից յետոյ։

—

ՂԶԼԱՐԻՑ գրում են մեզ՝ «Արդէն ձեզ յայտնի է Ղզլարի այգիների ցրտահարութիւնը, բայց գուցէ չը գիտէք որ մենք ուրիշ դժբաղդութիւններին էլ ենթարկվեցանք։ Մորեխը համարեա թէ բոլորովին ոչնչացրեց Ղզլարի և նրա շրջակայ գիւղերի արտերը։ Երկար ժամանակ երաժշտութիւն էլ լինելով, իսպառ չարացան բոյսերը և կանանչները։ Ղզլարցիների միակ յոյսը և նոցա ապրուստի միակ աղբիւրը այդեպանութիւնը և երկրագործութիւնն է։ Նոցա կեանքը բոլորովին կախված լինելով այդ պարապմունքներից, այժմ աննկարագրելի է նրանց վիճակը։ Խեղճ դամիկ մարդը թշուառ դրութեան մէջ ընկած, հաց է խնդրում։ Այդեպերները փող չունեն, որ նրան աշխատանք տան, վաճառականները գիտեն թէ ամբողջ տարի իրանց պարապմունքներից օգուտ չեն ստանայ։ Արվեստաւորները անգործ ու անվաստակ են մնում։ Դժուար է պատմել խեղճ մշակ ժողովրդի դրութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Ընդհանուր մարդասիրական դաղափարները, ընդհանուր եւրօպական քաղաքակրթութեան սկիզբները՝ շատ անգամ հակառակ են պետական, քաղաքական նպատակներին։ Այդ անձռնի երևոյթի ամենալաւ, ամենաճարտար ապացոյց ներկայացնում է մեզ Աւստրօ-Ունգարական պետութիւնը։ Աւստրիական կառավարութիւնը ոչ թէ միայն կասկածաւոր կերպով է նայում սլավօնական քրիստոնեաների շարժման վրա Թիւրքաց բռնաւորութեան դէմ, լաւ հասկանալով որ Թիւրքահպատակ սլավօնական ազգերի մէջ զարթնող անկախութեան և ազատութեան ոգին կարող է դիպչողական ներգործութիւն ունենալ և Աւստրօ-Ունգարիային հպատակ սլավօնական գաւառների և այդ ցեղին պատկանող ժողովրդի վրա,—բայց այժմ բացարձակապէս հանդէս է դուրս գալիս, որ ամեն միջոցներով արգելք դնէ Թիւրքահպատակ սլավօնացիների և Սերբիայի ազգային շարժման.... Եւ այդպէս մեր աչքերին ներկայանում է մի անձռնի երևոյթ՝ քրիստոնէական պետութիւնը աշխատում է ամեն միջոցներով արգելք դնել քրիստոնեաների ազատութեանը մահմեականութեան անտանելի ճնշող բռնաւոր լուծից։

Աւստրիան վախենում է որ ազատութեան և ազգութեան գաղափարները չը պատուաստվեն և իրան հպատակ սլավօնական ազգերի մէջ։ Հէնց որ սկսվեցաւ Սերբիական զօրքերի շարժումը դէպի Թիւրքիայի սահմանները,—Աւստրօ-Ունգարական տէրութիւնը հրամայեց իր զօրքերին մօտենալ Սերբիայի սահմաններին։ Այժմ աւստրիական բաւական նշանաւոր զօրքերի քանակութիւնը կենտրոնացած է սերբիական սահմաններում։ Աւստրիական տէրութիւնը արգելեց անցկացնել իր երկիրներով պատերազմական բեմից հեռադրալուրերը, արգելեց շարունակել հաւաքել Ունգարիայում նուիրատուութիւններ յօգուտ ապստամբվածների, յայտնեց թէ այլ ևս ոչինչ օգնութիւն չի տայ ապստամբներից փախստականներին, որք Թիւրքերից հալածված, շատ անգամ ստիպված էին անցնել աւստրիական սահմանները։ Այժմ հեռագիրը հաղորդում է, որ աւստրիական տէրութեան հրամանով կալանաւորվում են մի քանի սլավօնացիներ Ունգարիայում, որք համակրում էին իրանց ցեղակիցների շարժմանը Թիւրքիայի դէմ։

ԹԻՒՐՔԻԱ

—

Դեռ ոչինչ որոշ քայլ արած չէ ոչ Թիւրքաց, ոչ էլ սերբիական զօրքի կողմից։ Սերբիայի Միլան իշխանը յունիսի 20-ին (յուլիսի 2-ին) հրատարակեց իր պատերազմական հրովարտակը։ Միլան իշխանը յայտնում է որ Բոսնիայի, Հերցեգովինայի և Բոլգարիայի ապստամբութիւնը պատճառ է եղել որ Սերբիան զենաւորվեցաւ։ Հրովարտակի մէջ ասված է որ Զերնօգորիան դաշնակից կը լինի Սերբիային, Թիւրքիայի դէմ պատերազմի մէջ։ Հրովարտակի վերջին խօսքերը այս են՝ „Ուրեմն, դէպի առաջ, իմ քաջ զինուորներ, Ամենակարողը անունով, բոլոր ազգերի անունով որք ճանաչում են արդարադատ Աստուծուն։ Դէպի առաջ, արդարութեան և քաղաքակրթութեան անունով։“—Սերբիական զօրքերի զլխաւոր ոյժերը առաջնորդում է ռուս գեներալ Չերնիաէվ, որ մի ժամանակ Ցաշկէնտի պատերազմի մէջ յայտնվեցաւ և որ վերջին ժամանակ „Русскій Міръ“ լրագրի խմբագիր էր։ Գեներալ Չերնիաէվ Թիւրքաց սահման անցնելուց յետոյ պատահեց Թիւրքերին Ժուպովէցի մօտ։ Այդտեղ Թիւրքերը ջարդվեցան և նրանց զօրքը փախաւ Բէլենայի ամրոցից։—Չերնօգորիան նոյնպէս յայտնեց պատերազմ Թիւրքիային։—Սերբիայի սահմաններում պատահում են յաճախ կռիւներ Թիւրքաց նախագօրքերի հետ։ Սերբիական զօրքը չորս անգամ յետ մղեց Թիւրքերին, որք յարձակվում էին նրա վրա Սանտչարայի մօտ, բայց Նօվօ-Բազարի մօտ սերբիացիները մեծ կորուստ կրեցին։ Նրանք կորցրին սպանված և վիրաւորված 2000 մարդ։ Նիշ մօտ սպասվում է մի մեծ ճակատամարտ Չերնիաէվի և Աբդուլ-Քերիմի զօրքերի մէջ։—Կ. Պոլսում հասարակական կարծիքը շատ բորբոքված է։ Սերբիայի և Չերնօգորիայի կողմից Թիւրքիային պատերազմ յայտնելուց յետոյ, ապրստամբ զաւառների խռովութիւնները աւելի էլ ընդարձակվեցան և նոր ոյժ ստացան։ Բոլգարիայի ապստամբների զօրքը հասնում է 45 հազարի։ Ֆրակիայի մէջ ապստամբութիւն յայտնվեցաւ։ Կ. Պոլսից „Մշակի“ խմբագրութեանը յունիսի 20-ից ուղղված մասնաւոր նամակից քաղում ենք հետևեալ լուրերը՝—Անցեալ շաբաթը 61 հատ կրուպի թնդանօթներ բերվեցան Կ. Պոլիս, որտեղից նրանց մեծ մասը պէտք է ուղարկվեն Բաթում, այնտեղի բերդը ամրացնելու համար։—Օսմանեան կառավարութեան ունեցած ամբողջ զօրքը 230 հազարի է հասնում, սոցանից 93 հազարը միայն ապստամբված երկիրների մէջ է գտնվում, իսկ մնացած զօրքը կայսերութեան այլ և այլ տեղերը է բաժանված։—Սուլթանի սուր կապելու հանդէսը անդադար յետ է գցվում, որպէս ասում են Մուրադ Վ-ի ծանր հիւանդութեան պատճառով։ Այդ հանդէսը տեսնելու համար Թիւրքիայի ամեն կողմերից մահմեականները հաւաքվում են Կ. Պոլիս։—Քիւրդիստանից, Սեբաստիայից և Կեսարիայից գրում են մեր Կ. Պոլսի թղթակցին, որ այդ տեղերը քրիստոնեաների դրութիւնը անտանելի է, մի կողմից հալածված լինելով քիւրդերից, չերկէզներից և Թուրք մոլեռանդ ամբոխից, միւս կողմից հարստահարված լինելով տէրութեան պաշտօնեաների ձեռքից։ Թէ Փոքր-Ասիայում, թէ կղզիների վրա անդադար պատահում են քրիստոնեաների սպանութիւններ։—Կ. Պոլսի մէջ մահմեական ամբոխը անդադար զէնքեր է առնում և ամեն օր սպառնում է անկարգութիւններ յարուցանելու։—Կ. Պոլսի Ղալաթիա անուանված թաղում, ուր բազմաթիւ եւրօպացիներ են դրանվում, նորերումս, ինչպէս մեզ գրում է մեր թղթակիցը, Թուրք բեռնակիրները յարձակվելով խորվատ բեռնակիրների վրա, մի համաքարական վէճի պատճառով, Թուրք ժողովուրդն էլ նոցա հետ միացաւ քրիստոնեաներին ծեծելու նպատակով։ Իսկոյն խորվատների հետ միացան յոյները և հայերը։ Եթէ ոստիկանութիւնը վրա չը հասներ, բաւական ծանր անկարգութիւն կը ծագէր այդ կռուից։ Երկու կողմից էլ մարդիկ վիրաւորվեցան և Թուրք բեռնակիրներից մի քանիս սպանվեցան։ Եթէ մայրաքաղաքում այդ տեսակ անկարգութիւններ են պատահում, աւելացնում է նամակագիրը, և տէրութիւնը Կ. Պոլսում տեղի է տալիս մահմեական ամբոխին այդքան անիրաւութիւններ գործելու, ուրեմն կարելի է իրան երևակայել, որքան աւելի ծանր անկարգութիւններ են լինում դաւառներում, որտեղից մեզ լուրերն անգամ դըժուարութեամբ են հասնում։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

—

Յունիսի 15-ին

Երեք միլիոն Թիւրքահպատակ քրիստոնեայ հայ ժողովուրդ Թիւրքաց լուծի դէմ ուրիշ քրիստոնեաների ընդհանուր ապստամբութեան ժամանակ՝ ամենևին ձայն չէ հանում։ Հայերի տարրը Թիւրքիայում կարծես մեռած է։ Այդ անմխիթար երևոյթը ունի թէ իր աշխարհագրական և ազգագրական, թէ պատմական և բարոյական պատճառները։—Հայաստանի և Փոքր-Ասիայի հայերի վրա վիճակագրական ճիշդ տեղեկութիւններ ոչ ոք չունի։ Բայց որքան յայտնի է՝ ամենախիտ կերպով հայերը բնակեցրած են Վանի գաւառում և այդտեղ նրանք մահմեականներից բազմաթիւ են։ Բայց Վանի հայերը, բացի այդ գաւառի սարսափելի սարերից՝ բոլորովին զէնք չունեն և չեն իմանում զէնք գործածել։ Մուշ գաւառի հայերը ամենքը զինաւորված են և քաջ մարդիկ են, բայց այնքան խիտ կերպով բնակեցրած չեն։ Փոքր-Ասիայի որ մասն էլ որ գնաք՝ հայերի գիւղերը ցրված կը տեսնէք մահմեական գիւղերի մէջ։ Մահմեականներ ասելով պէտք է հասկանանք թէ Թիւրքերին, թէ քիւրդերին։ Երկու ցեղերն էլ թշնամի են հայերին՝ մահմեականութեանը յատկանիշ է ենթարկելով այս կամ այն քրիստոնեայ ցեղ իր ազդեցութեանը, անհաշտ թշնամի դարձնել նրան մինչև անգամ իր ցեղակից քրիստոնեաների։ Ինչպէս յայտնի է քիւրդերը հին մեդացիներ են, և ուրեմն հայերին և պարսիկներին ցեղակից ժողովուրդ։ Քիւրդերից նոքա, որք մահմեականութիւնը ընդունած չեն, որք աւարտարանն են ճանաչում, կամ եզիդիներ անուանված խառն քրիստոնէական և կռապաշտական աղանդը՝ շատ բարեկամ են հայերին։ Քիւրդերը առհասարակ քաջ, զօրեղ մարդիկ են և ամենքը զէնք ունեն։ Զէնք ունենալը քիւրդի համար առաջին հարկաւորութիւն է։—Մի քանի տարի առաջ Երզնկայի մօտ մի գիւղում բացվեցաւ մի հայոց արական ուսումնարան։ Քիւրդերը սկսեցին ուղարկել այդ ուսումնարանը իրանց երեխաներին, բայց տեղական առաջնորդը արգելեց որ հայերը քիւրդերի հետ միասին սովորին և ուսումնարանը ստիպվեցաւ այլ ևս չընդունել քիւրդերին։ Այդպէս է միշտ վարվում մեր հոգևորականութիւնը։ Ամբողջ աշխարհի ճշմարիտ քրիստոնէական ոգով վառված մարդիկ մեծ համակրութեամբ են նայում մահմեական լուծի տակ ճնչված քրիստոնեայ ցեղերի վրա, երբ նրանք հարկաւոր ժամանակին գիտեն իրանց սուրբ կրօնքը, աւետարանի ճշմարտութիւնը՝ զէնքը ձեռին պաշտպանելու, և ճշմարտութեան ու ազատութեան համար արիւն թափելու։ Իսկ հայոց հոգևորականութիւնը Փոքր-Ասիայում դարերով և միշտ համոզել է հայերին տան մէջն էլ զէնք չը պահել, որ կարողանան ցոյց տալ մահմեական տարրին թէ հայերը նրա հնազանդ, հլու հպատակներ են։ Այդ դեռ ոչինչ, այդ դեռ կարելի է մեկնել քրիստոնէական հնազանդութեամբ,—բայց ինչ կասէք որ մեր հոգևորականութիւնը միշտ եղել է ժողովրդի ամեն անհատական արտայայտութիւնը մատնող Թիւրքաց տէրութեան առջև։ Նորերումս Տրապիզոնում հայ երիտասարդները ուզեցին թատրոն ներկայացնել և ընտրեցին այդ ներկայացման համար մի պատմական ողբերգութիւն։ Հոգևորականները մատնեցին տէրութեանը, որպէս մի քաղաքական յանցանք, և երբ վարագոյրը բաղմաթիւ հանդիսականների ներկայութեամբ բարձրացաւ, դահլիճի դուռը բացվեց և մտաւ տէրութեան ոստիկան, հրամայելով որ հասարակութիւնը դուրս գայ թատրոնից և ներկայացումն չը շարունակվի։ Այդ տեսակ հազար ու մի անցքեր կարող եմ պատմել ձեզ մեր հոգևորականների քաջագործութենից։ Մատնութիւն և քրիստոնէութիւն միմեանց հակառակ սկիզբներ են։ Քիչ է պատահել մինթէ որ Թիւրքիայի ազատամիտ հայ երիտասարդները մատնվեցան հոգևորականների ձեռքով, քիչ է պատահել մինթէ որ հայ լրագրները խափանվեցան, հայ հոգևորականութեան բարձր. Դրան մատնութեան պատճառով... Ահա ինչ է արել և ինչ է անում մեզ համար մեր հոգևորականութիւնը։—Ընդհանրապէս Փոքր-Ասիայի և Հայաստանի հայերի դրութիւնը այս է՝ մահմեական տարրը կատաղած է հայերի դէմ, միայն այն պատճառով որ հայերը քրիստոնեայ ժողովուրդ են։ Մահմեական ամբոխը, թէ քաղաքներում, թէ գիւղերում՝ զրգված լինելով մոլեռանդ մօլլաներից, կը կոտորէր բոլոր հայերին, եթէ Թիւրքաց տէրութեան զօրքը չարգելէր դրանց կատաղութեան արտայայտվելուն...

* * *

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, յունիսի 8-ին.

Այն չարագործութենից յետոյ, որի մասին ես ձեզ պատմեցի, Ռաշտի մէջ գտնվող պարսկահպատակ հայերը դիմեցին Նորին Մեծութեան Պարսից Շահին, հետևեալ աղերսագիրը ուղարկելով նրան հեռագրով՝ «Ինչպէս Ձեր Մեծութեանը յայտնի է, մենք հայերս գտնվել ենք միշտ ամենահաւատարիմ և հնազանդ հպատակներ ձեր տէրութեան, և ոչ մի ժամանակ չէինք կարծում որ այդքան անապահով դրութեան մէջ կարող ենք լինել ձեր հողի վրա։ Եթէ տէրութիւնը չապահովացնէ մեզ, եթէ մեր անձը պաշտպանված չի լինի կայսերական հրամանով, մենք հայերս ստիպված կը լինենք մեր ընտանիքներով դաղթել ուրիշ երկիր, անցնել այն տէրութեան հողը, որի հովանաւորութեան տակ կարողանանք հանդիստ ապրել։» Այդ աղերսագրին սադրազամը պատասխանեց հայերին և Ռաշտի բնակիչներին, պատուիրելով մօլլաներին և քաղաքիս կառավարչին, որ այսուհետև այդ տեսակ անցքերը չը կրկնվեն։ Մի և նոյն ժամանակ սադրազամը ուղարկել է Ռաշտ մի վերաքննիչ, որին յանձնված է հետազօտել գործի բոլոր հանգամանքները, բռնել յանցաւորներին, և չղթայակապ բերել նրանց Թէհրան։ Սադրազամի հեռագիրը հանգստացնում է հայերին, խոստանալով նրանց այսուհետև ապահով կեանք պարսից հովանաւորութեան տակ և հրաւիրում է նրանց հանդիստ սրտով շարունակել պարապել իրանց պարապմունքներով։ Այս հեռագիրը չուտով տարածվեցաւ ամբողջ քաղաքում և հայերի ու Թուրքերի մէջ ձեռքից ձեռք էր անցնում։ Իսկոյն նահանգապետը այդ հրամանը կատարելով, բռնել է տալիս մի քանի մօլլաներին, որք դրդել էին ժողովուրդը սպանութիւններ անելու, և նոյնպէս հասարակ ժողովրդից մօտ 3 հազար հոգի կալանաւորելով, չղթայակապ ուղարկում է դէպի Թէհրան։ Մեր փո-

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ինչպէս հաստատուած է, Սերբիոյ զօրքերուն գլխաւոր հրամանատարութիւնը Գրիգոր Ալեքսանդրովիչ Ղարագաշեանցի կը յանձնուի Սերբիոյ զօրքերուն գլխաւոր հրամանատարութիւնը։ Ան ինքն ալ Սերբիոյ զօրքերուն հետ Սերբիա կերթայ։ Ան